



Our Church

*PLANS FOR OUR NEW LONG ISLAND
ARMENIAN APOSTOLIC CHURCH*

«ԵԿԱՅՔ, ՇԻՆԵՍՑՈՒՔ...»

Ժամանակէ մը ի վեր զգացուած է կարիքը Լոնկ Այլընտի մէջ կառուցանելու Հայ Եկեղեցի մը եւ Համայնֆային Կեդրոն մը: Այս անյետաճգելի պահանջը իրագործելու նպատակաւ կազմուած է Շինութեան Յանձնախումբս:

Ձեռնարկած ենք Աստուածահառոյ գործի մը այն վստահութեամբ թէ մեր ժողովուրդը, իր դարերու աւանդութեան համաձայն, միշտ կառուցեր է սրբազան կոթողներ Աստուծոյ փառֆին, մեր հոգեւոր սնունդի մատակարարումին եւ մեր ազգային ինքնատիպ ժառանգութեան գոյատեւումին համար:

Այս հաւատքով ձեռնարկուած աշխատանքը տուած է արդէն իր առաջին պտուղը Լոնկ Այլընտի ապագայ Հայ Եկեղեցւոյ եւ Համայնֆային Կեդրոնի հողի գնումով:

Պատմական իրողութիւն է որ մեր ժողովուրդը ընդունեց քրիստոնէութիւնը իրրեւ պետական կրօնք բոլոր ազգերէն առաջ 301 թուականին:

Մեր Սուրբ Եկեղեցին հայ ժողովուրդին համար վերածուած է անառիկ բերդի, յուսատու լոյսի եւ ներշնչման աղբիւրի: Մեր ժողովուրդը, դարերու ընթացքին, ամուր հաւատքով կառուցած է իր Աստուծոյն եւ Եկեղեցիին անոր մէջ խտացնելով իր հոգեկան կենսունակութիւնը:


Մեր տխուր պատմութեան մէջ, մենք մեր սփոփանքը փնտռէր ենք Աստուծոյ, իր Եկեղեցիին եւ իր Տան մէջ: Որպէս տեսլապաշտ, գաղափարապաշտ եւ հոգեկան արժէքներու վրայ գուրգուրացող ժողովուրդ մենք յատկանշուած ենք նաեւ իրրեւ կառուցանող ժողովուրդ:

Հաւատարիմ այս ժառանգութեան, մենք կառուցանէր ենք Աստուծոյ Տունը, հայրենիքի թէ սփիւռքի մէջ եւ Ամերիկայի մէջ: Եւ պիտի կառուցանենք նաեւ Լոնկ Այլընտի մէջ: Յանձնախումբս առած է արդէն առաջին կարեւոր քայլը: Մեզմէ իւրաքանչիւրը ունի լուրջ գիտակցութիւնը իր պարտականութեան:

Ուրեմն, եկէք, շինենք Աստուծոյ եւ մեր Տունը, մեր ժողովուրդի օգտին համար:

ԼՈՆԿ ԱՅԼԸՆՏԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔ

"COME, LET US BUILD . . ."



There has been an urgent need for an Armenian Church and Community Center in Long Island for some time. The formation of a Church Building Committee, has been a first step toward its fulfillment.

We have undertaken this God-pleasing task with the conviction that our people, in accordance with their centuries-old tradition, have always erected sacred monuments for the glory of God, for their spiritual nourishment, and for the perpetuation of their valued legacy. This work has already borne its first fruit with the purchase of the land for this project.

It is an historical fact that our people accepted Christianity as a state religion before all other nations in 301 A.D. Our church has become for our people, an impregnable fortress — an inspiring beacon. Our people, through the ages, have clung tenaciously to their God and Church, embodying therein all their spiritual and cultural vitality.

Through all its history, our people have found their solace in God, His Church, His House. Idealistic and visionary, always seekers of spiritual values, they have also been, characteristically, a creative people. In the tradition of this noble legacy, Armenians have built the House of God in their native land, in the diaspora, in America — and they will erect their edifice on Long Island.

Each of us is fully aware of his responsibilities for this duty. The Church Building Committee has taken the first significant step. We know that the Armenian community in Long Island will support this enterprise in the same spirit.

Then, come, let us build the House of God and our people, for the glory of God, for the prosperity and perpetuity of our Holy Church, and for the benefit of our people.

LONG ISLAND ARMENIAN CHURCH
BUILDING COMMITTEE

“WITHOUT A CHURCH EDIFICE WE ARE

THE ARMENIAN CHURCH IN AMERICA
OFFICE OF THE PRELATE NEW YORK

Լոնկ Այլընտի Հայ Առաքելական Եկեղեցւոյ
Շինութեան Յանձնախումբին

Մեր Թեմին եկեղեցիներու թիւին վրայ որեւէ յաւելում Աստուածահաճոյ գործ մըն է: Ուրախ եմ որ Լոնկ Այլընտի մեր ժողովուրդը եւ Յանձնախումբդ եռանդագին լծուած է նոյն շրջանին մէջ Հայ Առաքելական Եկեղեցւոյ մը շինութեան եւ կանգ չառներ որեւէ գոհողութեան առջեւ: Լոնկ Այլընտի ստուար հայութիւնը անհրաժեշտօրէն պէտք ունի Հայ Եկեղեցիի մը: Համոզուած եմ որ՝ առանց Աստուծոյ Տան մենք կը նմանինք տնազուրկ ընտանիքի մը:

Վստահ եմ որ դուք Լոնկ Այլընտի մէջ պիտի կառուցանէք Հայ Եկեղեցի մը՝ Աստուծոյ փառքին համար: Եւ այդ կոթողը գրաւական մը եւս պիտի հանդիսանայ այս մեծ երկրին մէջ մեր հաւատքին գօրութեան: Կը մազքեմ Ձեզ կատարեալ յաջողութիւն ի Տեառնէ:

Մնամք հայրական ջերմ սիրոյ ողջունիւ,

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Սեպտեմբեր 10, 1954 Տեղապահ Առաջնորդութեան

ARCHBISHOP TIRAN
NEW YORK

Լոնկ Այլընտի Հայ Առաքելական Եկեղեցւոյ
Շինութեան Յանձնախումբին

Շատ ուրախ եմ որ Լոնկ Այլընտի մէջ Հայ Եկեղեցի մը շինելու գործը եռանդով յառաջ կը տանիք:

Ներկայ ժամանակը մանաւանդ ստիպողական կը դարձնէ Ամերիկայի մեր թեմին մէջ եկեղեցիներու շինութիւնը եւ ծուխերու կազմակերպումը: Վասնզի ամերիկացիին հայ նոր սերունդը իր մատաղ տարիքին պէտք է փարի Հայ Եկեղեցիին եւ մեծնայ անոր մէջ:

Անշուշտ մեր Եկեղեցին գօրացնելու նիւթական պայմանները ստեղծելէն ետք՝ անհրաժեշտ է նաեւ ստեղծել հոգեւոր պայմանները, որպէսզի մեր գաւակները կարենան մխիթարութիւն եւ փրկութիւն գտնել Տէր Յիսուս Քրիստոսով եւ խմբուին Աստուծոյ տան մէջ:

Ինչ որ մեր հայրերը մեզ տուին՝ սոկոսով միասին նոյնը պարտաւոր եմք տալ մեր յաջորդներուն:

Պէտք չէ թոյլ տանք որ մեր գաւակները օտար տուններու մէջ իրենց հոգւոյն ապաստան գտնեն:

Ձերմ սիրով եւ օրհնութեամբ,
Սեպտ. 10, 1954 ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

A FAMILY WITHOUT A HOME"

DIOCESE OF LONG ISLAND
OFFICE OF THE BISHOP
GARDEN CITY, LONG ISLAND

September 7, 1954

MEMBERS OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH:

It has been called to my attention that you are founding an Armenian Church on Long Island, may I assure you of my prayers for God's Blessing on this important movement for all the faithful people of your Congregation.

Faithfully yours,
BISHOP JAMES P. DeWOLFE,
Bishop of Long Island

CONGRESS OF THE UNITED STATES
HOUSE OF REPRESENTATIVES, WASHINGTON, D.C.

September 9, 1954

THE LONG ISLAND ARMENIAN CHURCH
BUILDING COMMITTEE,

May I extend to you and all American Armenians active in the formation and building of the Long Island Armenian Church my best wishes for a successful completion of such a worthy and necessary project.

A House of God is a necessity for all of us. With an expression of faith in Him, and combined with an abiding love for our great United States, our efforts must and will bear fruit.

Welcome to Long Island!

Sincerely,
STEVEN B. DEROUNIAN, M. C.

THE REV. A. A. BEDIKIAN
LEONIA, NEW JERSEY

Մենք կորսնցուցիմք մեր բոլոր ունեցածներուն հետ՝ մեր տաճարները մեր բնիկ երկրին մէջ: Հայ կեանքը եւ հայ հոգին հիմա պիտի կրնանք ապրեցնել այս մեր պանդըլստութեան երկրին մէջ նախանձաւոր ըլլալով պահպանելու մեր հաւատքը, մեր հայրենի աւանդութիւնները, ինչպէս նաեւ՝ լեզուն եւ պատմութիւնը: Այս քանկագին արժէքներուն պահպանութեան համար եկեղեցին կարեւոր միջոց մըն է: Եթէ մենք մեր ժառանգութիւնը կորսնցնենք այս երկրին մէջ ալ ի՞նչ կը մընայ մեզի որ գմեգ գատէ ուրիշներէն իբրեւ ինքնուրոյն ազգ մը, եթէ ոչ իր պարունակութենէն դատարկուած անուն մը: Նոր ջանք մը, նոր նախանձ մը սկսած է բորբոքիլ այս երկրին Հայերուն սրտին մէջ այդ ժառանգութիւնը պահպանելու:

Քրիստոսի սէրը մեր ազգին մէջ ապրեցաւ, անմահ ուրակով եւ չափով, Մեծն Վարդանէն սկսեալ:

Այդ սիրոյն պտուղը եւ փաստը ըլլալու է կառուցուած եւ կառուցանելի ամէն շէնք ու տաճար:

Սեպտ. 14, 1954

Ա. Ա. ՊԵՏԻԿԻԱՆ

General Layout and Design

of the Long Island

Armenian Apostolic Church Project

THE LOCATION:

The block front on the north side of Horace Harding Blvd., Oceana Ave. to 210 St., a plot 200' x 100'. This property, already purchased, has been decided upon after more than a year's careful study and search.

THE PROJECT:

The entire project will consist of three connecting buildings:

A: Main Church Building and Auditorium.

B. Rectory and Cultural Center Building.

C: Small Utilitarian Building connecting and serving both A. and B. Buildings.

It is essential that Buildings A. and C. should be built simultaneously. The plans will be arranged so that Building B. may be built later should it become necessary.

A. MAIN BUILDING:

A. Building is set back approximately 40' from both streets, thus creating an attractive and private front courtyard 3½' above street level and bordered with a stone wall at the property line.

The main entrance of the Church will be from Oceana Ave. (West) and altar at East end. The Nave will have an approximate seating capacity of 330.

A large auditorium underneath will be complete with all facilities. It will have full size windows on the north side. The main entrance of the auditorium will be from Building C. at street level.

B. BUILDING:

Ground floor will have offices, three classrooms, and a medium size meeting and lecture room.

Upper floor will have appropriate living quarters for the clergy: also a small apartment for the caretaker.

Three other rooms to serve for various organization meetings as well as classrooms.

A large room to be used as a library, art center, and exhibit room.

C. BUILDING:

C. Building will serve as the connecting building between Buildings A. and B. It will house the heating room, wash rooms, coat room, kitchen etc.

THE DESIGN:

The architect feels that the design of the exterior as well as interior and the entire entourage should serve the needs and be a sincere interpretation of the spirit of the present generation of Armenians in America.

A contemporary rendition utilizing the details and outlines of our ancient Armenian Architecture will fuse symbols of our great heritage with the aspirations and hopes of the present, and become a symbol of that new American culture whose roots lie deep in the past.



A perspective sketch by Manoung Exerjian A.I.A. of the new Long Island Armenian Apostolic Church on the block front north side of Horace Harding Blvd. Oceana Ave. to 210th St., Queens, New York.

ՇԻՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ... ՇԻՆԵՆՔ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԴՐՈՂԸ

ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ...

Իւրաքանչիւր հարիւր հայ ընտանիք կ'ունենար իր Եկեղեցին: Լոնկ Այլընտի սայուքիւնը կը հաշուէ աւելի քան 1200 ընտանիքներ, որոնք ստիպողականօրէն պէտք ունին դիւրամատչելի Հայ Եկեղեցիի մը:

ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ...

Մեր նոր Եկեղեցին եւ Համայնքային Կեդրոնը կենսական են քրիստոնէական կրթութեան մեր ընդարձակ ծրագրերը իրագործելու համար: Մեր զաւակները պիտի ստանան իրենց տեխնիկ եւ ժառանգական դաստիարակութիւնը իրենց նախահայրերու Եկեղեցւոյն երգիչին տակ, իրենց հարազատ Կիրակնօրեայ Դպրոցներու մէջ: Մեր երիտասարդութիւնը առիթ պիտի ունենայ հաւաքուելու Հայ Եկեղեցւոյ շունչին տակ: Այսպիսով, միջոցներ հայթայթած պիտի ըլլանք մեր նոր սերունդին իրարու հետ ապրելու եւ մեծնալու:

ՍՐԱՀՆԵՐ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՍԵՆԵԱԿՆԵՐ...

Պիտի տրամադրուին Լոնկ Այլընտի բոլոր հայ կազմակերպութիւններու ընկերային եւ մշակութային ձեռնարկներուն եւ հնարաւոր պիտի դարձնեն որ մեր նոր սերունդը մէկտեղ հաւաքուի: Այսպիսի դիւրութիւններ պիտի նպաստեն աւելի կենսունակ եւ արդիւնաւէտ համայնքային կեանքի մը ստեղծումին:

ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ...

Մենք պիտի ունենանք Աստուծոյ Տունը որ ՄԵՐԸ պիտի ըլլայ հարազատօրէն եւ տեսալէս: Մեր զաւակները պիտի ունենան ա՛յն՝ որ իրենցն է ծնունդով — իրենց մայրենի լեզուն, գրականութիւնը, արուեստները եւ պատմութիւնը: Այս ըմբռնումով՝ պիտի կարենանք խղճի հանդարտութեամբ մեր պարտականութիւնը կատարել մեր անցեալի պանծալի ժառանգութեան եւ մեր նոր ու ծաղկող ներկայ կեանքին հանդէպ, որպէս արժէքաւոր քաղաքացիներ մեր երկրին:

ԾՆՈՂՔ ԵՒ ԶԱԻԱԿՆԵՐ...

Արդար գոհունակութեամբ եւ հպարտութեամբ պիտի կառուցանենք մեր Եկեղեցին եւ պիտի բերենք մշակութային նոր նպաստ մը Լոնկ Այլընտի համայնքին: Մեր անզուգական Ս. Պատարագը, մկրտութեան, պսակի եւ այլ արարողութիւնները ուրախութեամբ պիտի լեցնեն ու ներշնչեն մեր հոգիները:

WE NEED A CHURCH . . . WE NEED A COMMUNITY CENTER

Traditionally . . .

Every one-hundred Armenian families have always had a church of their own. The Armenian community in Long Island numbers well over 1200 families, who are in urgent need of an easily accessible church edifice in their own community.

Children and Youth . . .

Our new Church and Community Center are vital for the fulfillment of extensive Christian educational programs. Our children will receive instruction in the ancestral and hereditary church of their forefathers in their own Sunday School Classes. Our youth will have an opportunity to assemble under the aegis of the Armenian Church and will proudly perpetuate the noblest qualities of our spiritual and national heritage. And, thus, we will have provided our youngsters the means to meet and be with each other.

Parents and Youngsters . . .

Will derive a greater satisfaction and pride in bringing their own ancestral church among their neighbors; and by making a new cultural contribution to the Long Island community. Our unique Divine Liturgy, baptism, wedding and other rites will be sources of joy to us and of interest to our neighbors.


Spiritually and Culturally . . .

We will have a House of *our* Lord which will be uniquely and permanently *ours*. Our youngsters will acquire their birthright — a knowledge of The Armenian language, literature, arts, and history. Young and old alike, will discover and realize new opportunities, thus, to become more complete, and valuable citizens of our communities and country. And in so doing, we will find our conscience at peace for fulfilling our duties to our heritage of past glory and to our own newly flourishing way of life.

Halls and Rooms Available . . .

For religious, social, educational and cultural activities of all Armenian groups in Long Island will provide increased opportunities for our youngsters to meet and be with one another; for parents and youth to enjoy greater relaxation together. The ready accessibility of such space will make for a more stimulating, active and satisfying community life.





*Location of the Grounds of the Long Island Armenian Apostolic Church
210th Street and Horace Harding Boulevard, Bayside, Long Island*

Long Island Armenian Church

Building Committee

DADOUR DADOURIAN, *Honorary Chairman*

Building Committee

DIKRAN MISSERLIAN, *Chairman*

YERVANT HAMPAR, *Vice Chairman*

GEORGE G. BASHIAN, *Treasurer*

ALICE BASHIAN, *Recording Secretary*

LUCY HAZARD, *Corresponding Secretary*

Campaign Committee

VAHE HAMPAR, *Chairman*

HENRY SAHAKIAN

DR. JOHN K. KARNIK

EDWARD JAMAKORDZIAN

JOSEPH TOPALIAN

Publicity Committee

GARO ARTINIAN, *Chairman*

KRIKOR HARUTUNIAN

Legal Committee

RICHARD GREGORY, *Chairman*

GREGORY MELIKIAN

Architectural Committee

ARTIN ASLANIAN, *Chairman*

MANOUG EXERJIAN

YERVANT HAMPAR

SOUREN ALLALEMDJIAN

Membership Committee

ZAREH KAPIKIAN, *Chairman*

Young Couples Committee

JACK DADOURIAN, *Chairman*

Women's Auxiliary

MRS. ARAX EXERJIAN, *Co-Chairman*

MRS. ZABEL ASLANIAN, *Co-Chairman*

MRS. H. AVAKIAN

MRS. S. AGABIAN

MRS. M. ANDREASIAN

MRS. G. BASHIAN

MRS. J. CHORBAJIAN

MRS. D. DADOURIAN

MRS. J. DADOURIAN

MRS. A. DILSIZIAN

MRS. A. GEDACHIAN

MRS. Y. HAMPAR

MRS. Z. KAPIKIAN

MRS. E. KIRK

MRS. D. MISSERLIAN

MRS. N. NOURYAN

MRS. V. PEKJIAN

MRS. P. PIRANIAN

MRS. H. SAHAKIAN

MRS. V. SIMIDIAN

MRS. J. TATOSIAN

Advisory Committee

SAMUEL AGABIAN

GHEVONT AGHAJANIAN

H. AVAKIAN

HAGOP BARSAMIAN

PAUL CHAPUTIAN

JOSEPH CHORBAJIAN

B. K. HORASANCI

B. MESROBIAN

ALBERT NARGIZIAN

NUBAR NOURYAN

PUZANT PIRANIAN

Գրքոս Յեւայ մկրայ
ուղիդ արսի մկր, Պէր,
եւ գրքոս Յեւայ մկրայ
յազարեայ մկր:

